Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 14-06-2021 թ. որոշմամբ
««ԱԶՆԱՎՈՒՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԱԶՆԱՎՈՒՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱ 6
1.3 Պետական գրանցման համարը		222.160.924722
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2016-08-16
1.5 ՀՎՀՀ-ն		02652202
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)93838291
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		https://aznavourfoundation.org/
1.8 Էլեկտրոնային փոստը		a.baghdasaryan@philin.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Կրիստինա Սարկիսյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	7	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Բարեգործական, մշակութային, կրթական և սոցիալական ծրագրեր	108920509
	տոկոսային եկամուտ	279503252
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Բարեգործական, մշակութային, կրթական և սոցիալական ծրագրեր	7007440
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	

Digitally signed by BAGHDASARYAN ARTUR 1607830019

9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Կրթամշակութային	164042950	
Բարեգործական	117827614	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	281870564	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	281870564	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 7 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փող. 4/7
«Իմպերիում Պլազա» բիզնես
կենտրոն, 7-րդ հարկ

Հեռ՝ +374 10 52 65 20
Ֆաքս՝ +374 10 52 75 20
www.deloitte.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ազնավուր» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին՝

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Ազնավուր» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում՝ այդ հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև դրանց առնչվող ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և մենք կատարել ենք էթիկայի հետ կապված մեր այլ պարտականությունները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

«Դելոյթ» անվանումը վերաբերում է երաշխիքով սահմանափակված «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ» բրիտանական մասնավոր ընկերությանը, ինչպես նաև դրա անդամ ընկերությունների ցանցը ներկայացնող ցանկացած մեկ կամ մի քանի կազմակերպության, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին և անկախ իրավաբանական անձ: «ԴելոյթԹուշԹոմացուԼիմիթեդ»-ի, նրա անդամ ընկերությունների և իրավական կառուցվածքի մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.com/about: ԱՊՀ-ում «Դելոյթ»-ի իրավական կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte. am/about:
© 2021 «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ դիտարկված, զերծ են սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին, կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք

առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«ԴԵԼՈՅԹ ԱՐՄԵՆԻԱ» «DELOITTE ARMENIA» 02612726

Սրբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն

Արփինե Ղևոնդյան
Աուդիտի տնօրեն

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ
Երևան, Հայաստանի Հանրապետություն
Ապրիլի 23, 2021թ.

«ԱԶՆԱՎՈՒՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2020թ.	2019թ.
Եկամուտ նվիրատվություններից	5	229,459	88,057
Մաշվածության և ամորտիզացման ծախսեր	8	(25,738)	(22,439)
Անձնակազմի ծախսեր	19	(48,348)	(17,784)
Ստացված նվիրատվություններ	6	(117,828)	(15,276)
Ներկայացուցչական և գործուղման ծախսեր		(2,215)	(8,616)
Ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող վարկային կորուստներ	10	(758)	(7,575)
Այլ ծախսեր	7	(30,956)	(12,751)
Գործառնական գործունեությունների արդյունքները		**3,616**	**3,616**
Ֆինանսական եկամուտ	10	264,418	226,851
Վնաս զուտ արտարժույթի փոխարժեքային տարբերությունից		47,786	(14,998)
Զուտ ֆինանսական եկամուտ		**312,204**	**211,853**
Շահույթը նախքան հարկումը		**315,820**	**215,469**
Եկամտահարկի ծախսեր		(47,595)	(45,630)
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		**268,225**	**169,839**

Հաստատվել են հրապարակման համար 2021 թ. ապրիլի 23-ին:

Կրիստինա Սարկիսյան
Գործադիր տնօրեն

Արմինե Սահակյան
Գլխավոր հաշվապահ

Երևան, Հայաստանի Հանրապետություն

9 - 34 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ԱԶՆԱՎՈՒՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2020թ. դեկտեմբերի 31	2019թ. դեկտեմբերի 31
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	8	1,344,115	1,247,912
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**1,344,115**	**1,247,912**
Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	100,884	69,070
Ժամկետային ավանդներ	10	3,308,716	3,194,990
Կանխավճարներ և այլ ակտիվներ	11	50,328	35,726
Պաշարներ		1,377	1,118
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**3,461,305**	**3,300,904**
Ընդամենը ակտիվներ		**4,805,420**	**4,548,816**
Պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ			
Ընթացիկ շահութահարկի գծով վճարման ենթակա գումարներ		47,160	45,270
Վճարման ենթակա գումարներ	12	6,535	1,246
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**53,695**	**46,516**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հատուկ նպատակային միջոցներ	13(ա)	2,980,484	3,091,871
Ակտիվներին վերագրելի պետական դրամաշնորհներ	14	1,179,499	1,204,960
Ակտիվներին վերագրելի հատուկ նպատակային միջոցներ	13(բ)	151,321	33,273
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**4,311,304**	**4,330,104**
Ընդամենը պարտավորություններ		**4,364,999**	**4,376,620**
Կուտակված հավելուրդ		440,421	172,196
Զուտ ակտիվներ		**440,421**	**172,196**
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		**4,805,420**	**4,548,816**

9 - 34 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ԱԶՆԱՎՈՒՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	Զուտ ակտիվներ
Զուտ ակտիվներ 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**2,357**
Տարվա համապարփակ եկամուտ		169,839
Զուտ ակտիվներ 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**172,196**
Տարվա համապարփակ եկամուտ		268,225
Զուտ ակտիվներ 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		**440,421**

9 - 34 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ԱԶՆԱՎՈՒՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Ծան.	2020թ.	2019թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Նվիրատվություններից մուտքեր	13	115,928	2,815,361
Վճարումներ մատակարարներին		(42,427)	(76,706)
Վճարումներ աշխատակիցներին		(36,267)	(18,015)
Վճարներ ստացված նվիրատվությունների համար		(110,696)	(12,983)
Այլ դրամական վճարներ		(11,564)	(6,934)
Շահութահարկի վճարում		(45,705)	-
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		**(130,731)**	**2,700,723**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Մուտքեր մարված ավանդներից		4,403,063	107,102
Ավանդների ներդնում		(4,253,129)	(3,289,694)
Ժամկետային ավանդներից ստացված տոկոսային եկամուտ		-	204,410
Հիմնական միջոցների ձեռքբերում		(35,212)	(1,302)
Ներդրումային գործունեությունից ստացված (ներդրումային գործունեությունում օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր		**114,722**	**(2,979,484)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում		**(16,009)**	**(278,761)**
Արտարժույթի փոխարժեքային տարբերության զուտ ազդեցություն դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		47,823	(12,168)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ		**69,070**	**359,999**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	9	**100,884**	**69,070**

9 – 34 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 09.08.2021 11:01